ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Դավիթ Գագիկի Վարդանյանի «**Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում**» թեմայով Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական տևական և կայուն աճի պահպանման համար համախառն ազգային խնայողությունների՝ որպես երկրի ներդրումային ներուժի կարևոր աղբյուրի նշանակությունն ակնհայտ է: Դրանով է պայմանավորված, որ ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրներում, ներքին ներդրումների բարձր մակարդակի պահպանման համար անհրաժեշտ խնայողությունների ապահովումը հանդիսանում է տնտեսական քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը:

Մինչև 2008 թվականի ֆինանսական ճգնաժամը ՀՀ տնտեսական աճին նշանակալի նպաստ են բերել օտարերկրյա ուղղակի ներդրումները, նշանակալի է եղել պետական պարտքի մեջ արտաքին պարտքի մասնաբաժինը, դրական միտումներ են ունեցել անհատական ստացվող տրանսֆերտները: Այդ ամենը նպաստել է կապիտալի կուտակման բարձր մակարդակի ձևավորմանը, տնտեսական աճի բարձր տեմպերին, ինչը, սակայն, տևական չի եղել:

Հետճգնաժամային ժամանակաշրջանում, մինչև 2020-2021 թվականները ձևավորվել են արտաքին աղբյուրներից ներքին ներդրումների ֆինանսավորման նվազման միտումներ, որպես հետևանք՝ կապիտալի կուտակման մակարդակի անկում, տնտեսական ոչ կայուն և ցածր տեմպերով աճ:

Խնայողությունների և տնտեսական աճի փոխազդեցության, ներքին ներդրումների ֆինանսավորման աղբյուրներին առնչվող հիմնախնդիրները ՀՀ-ում պատշաճ հետազոտված չեն: Մինչդեռ տնտեսական կայուն աճի համար պահանջվող ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերի և անորոշությունների մեծացման պայմաններում առաջացել է դրա անհրաժեշտությունը: Այս առումով, ատենախոսական հետազոտության թեման գիտական և գործնական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում:

ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դ. Վարդանյանի ատենախոսության մեջ ձևակերպված դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների ճշտությունը պայմանավորված է, ամենից առաջ, հետազոտության տրամաբանական կառուցվածքով:

Ատենախոսական աշխատանքում Դ. Վարդանյանը ներկայացնում է համախառն խնայողությունների ձևավորման գիտատեսական հիմնավորումը և արդյունավետ օգտագործման գործնական առաջարկություններ: Ատենախոսության բովանդակության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ աշխատանքում ձևակերպված խնդիրները և պաշտպանության ներկայացվող գիտական հիմնական դրույթները լիարժեք համապատասխանում են սահմանված նպատակին և ապահովում դրան հասնելը:

Առաջին՝ «Տնտեսական աճի համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման արտաքին և ներքին աղբյուրների հետազոտության տեսամեթոդական հիմքերը» գլխում, հեղինակավոր աղբյուրների օգտագործմամբ, խնայողությունների երևույթի առաջացման և զարգացման համակողմանի քննարկմանը հետևում է ազգային հաշիվների համակարգում դրանց արտացոլման հարցի քննարկումը, որի ընթացքում հեղինակն առաջարկում է խնայողությունները դիտարկել լայն և նեղ իմաստով, նշելով, որ ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հրապարակումներում երբեմն ճիշտ չի կիրառվում «խնայողություններ» բառեզրը, նկատի ունենալով, որ ազգային հաշիվների համակարգում «խնայողություններ» բառեզրին ավելի լայն իմաստ է տրված: Տարանջատելով լայն և նեղ իմաստով խնայողությունները, միաժամանակ հեղինակը զարգացնում է «զուտ խնայողություններ» հասկացությունը, առաջարկելով դրանում ներառել մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, ինչը համահունչ է Համաշխարհային բանկի կողմից խնայողությունների այդ տեսակի ճշգրտումների մեթոդաբանությանը (էջ 25-33):

Ուշագրավ է ներդրումների և պետական պարտքի ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերի համակարգված ներկայացումն աշխատանքում, ինչի հիման վրա, իրավացիորեն, եզրակացվում է, որ արտաքին աղբյուրների, մասնավորապես, ՕՈՒՆ-ի հաշվին ներքին ներդրումների ֆինանսավորման ռիսկերը և անորոշությունները գնալով մեծանում են, իսկ COVID-19 համավարակից հետո և աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում դրանք էլ ավելի կուժգնանան (էջ 34-46): Աշխատանքի այս մասում գործնական հետաքրքրություն է ներկայացնում ներքին խնայողությունների հաշվին ներքին ներդրումների միջազգային փորձի քննարկումը, որի որոշ կողմեր հեղինակը կիրառելի է համարել Հայաստանի համար: Այս մասում ներկայացված հետազոտության տեսամեթոդական հիմքերը և կատարված

եզրահանգումները պայմանավորել են աշխատանքի հետագա մասերի շարադրանքի տրամաբանությունը:

Երկրորդ՝ «Խնայողությունների, ներդրումների և տնտեսական աճի փոխկապվածությունը ՀՀ-ում» գլխում, խնայողությունների և մակրոտնտեսական այլ ցուցանիշներին վերաբերող ժամանակային շարքերի տվյալների օգտագործմամբ մանրազնին վերլուծվել են համախառն ազգային, ներքին և զուտ խնայողությունների ձևավորման միտումները, բացահայտվել որոշակի օրինաչափություններ և հիմնախնդիրներ, համախառն ազգային խնայողությունների կառուցվածքը, փոխկապվածություններ հետազոտվող փոփոխականների միջև, ինչպես նաև գնահատվել է խնայողությունների մակարդակի մակրոտնտեսական առանձին ցուցանիշների ազդեցությունը (էջ 55-100):

Հատկապես ուշագրավ է աշխատանքի այս մասում «խնայողություններ-ներդրումներ» ռեսուրսային ճեղքվածքին հեղինակի անդրադարձը, դրա վրա ՕՈՒՆ-ի ազդեցության գնահատումը: Ըստ էության, խոսքը վերաբերում է արտաքին աղբյուրների հաշվին ներքին ներդրումների ապահովվածության աստիճանին, որի նվազեցման օբյեկտիվ անհրաժեշտությանն են վերաբերում աշխատանքի երրորդ գլխում ներկայացված մոտեցումները:

Գիտատեսական և գործնական հետաքրքրություն են ներկայացնում խնայողությունների առնչությամբ Քեյնսի և Սոլոուի վարկածների ստուգումը հեղինակի կողմից: Մասնավորապես, Գրեյնջերի թեստի օգտագործմամբ բացահայտվել է, որ Հայաստանի տնտեսության մեջ խնայողություններն են հանդիսանում տնտեսական աճի պատճառ: Հետևաբար, այդպիսով հստակեցվում է երկրի տևական կայուն աճի ապահովման տնտեսական քաղաքականության թիրախը (էջ 73-80):

Արժեքավոր է հեղինակի եզրահանգումը զուտ խնայողությունների առնչությամբ, որի առավելագույնս ճշգրտված ցուցանիշը կարող է հստակ պատկերացում տալ տնտեսական աճի որակի մասին: Այս առումով, ստացված ռեգրեսիոն հավասարումները գործնական նշանակություն ունեն (էջ 99-100):

Նկատի ունենալով խնայողությունների մոբիլիզացման գործում երկրի ֆինանսական զարգացման կարևորությունը, հեղինակը, օգտագործելով համապատասխան համաթվեր, ուսումնասիրում է ֆինանսական շուկաների և ինստիտուտների զարգացման վիճակը և ուշադրություն դարձնում ՀՀ ֆինանսական հատվածի կայացման առանձնահատկությունների վրա, ինչն արտահայտվում է տնտեսության իրական հատվածից դրա հարաբերական մեկուսացմամբ (101-112): Այս մասում կատարված վերլուծության հիման վրա եզրակացնում է. «...չնայած Կառավարության և միջազգային կազմակերպությունների գործուն աջակցությանը, ՀՀ-ում ֆինանսական զարգացման զսպող գործոնը մնում են ֆինանսական շուկաները,

հատկապես՝ կապիտալի շուկան» (էջ 112): Ելնելով տեսանելի ժամանակային հորիզոնում ՀՀ կապիտալի շուկայի զարգացման ոչ լավատեսական կանխատեսումներից, հեղինակը հանգել է ներքին խնայողությունները ներդրումների փոխակերպան այլ մոտեցումների մշակման անհրաժեշտությանը, ինչը թվում է փաստարկված:

Երրորդ՝ «Ներքին խնայողությունների խթանման և արդյունավետ օգտագործման հանրային քաղաքականության շրջանակը» գլխում հեղինակը ներկայացնում է խնայողությունների խթանման և արդյունավետ օգտագործման հայեցակարգային, մեթոդական մոտեցումներ, որոնցում առանձնանում է հատկապես արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի և ներքին ներդրումների գաղափարը՝ հիմնված ԱՄՆ Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի, Հարվարդի և Բրաունի համալսարանների մշակումների վրա: Հեղինակային կողմը, միջազգային պրակտիկայում վաղուց հաջողությամբ փորձարկված արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի և ներքին ներդրումների զուգորդումն է, որի ֆինանսավորման աղբյուր են դիտվում ներքին խնայողությունները: Ընդ որում, արժեքավորն ՕՈՒՆ-ին ընտրանքային մոտեցումն է: Խոսքը վերաբերում է բացառապես սահմանային տեխնոլոգիաների ներդրմանը միտված արտահանման հարթակի ձևավորմանը՝ օտարերկրյա և տեղական ներդրողների մասնակցությամբ, որի նպատակն արտադրողական գիտելիքի փոխանցումն է: Այդ նպատակով նախատեսվում են ինչպես ՕՈՒՆ-ի հարկային խթաններ, այնպես էլ ներքին խնայողությունների սուբսիդավորում: Հեղինակը որպես ուղենիշ է դիտում ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով սահմանված երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացման դրույթը: Միաժամանակ, հեղինակային մշակում կարող է դիտվել նաև դիսկոնտավորված արդյունավետ հարկային դրույքաչափերի ներմուծման առաջարկությունը, որը հաշվի առնում ծովային ելք չունենալու գործոնը (էջ 115-131):

Ուշագրավ է տնային տնտեսությունների և պետական խնայողությունների փոխկապվածության և հարկաբյուջետային քաղաքականության դիտարկումը՝ «Բարրո-Ռիկարդոյի համարժեքություն» վարկածի համատեքստում (էջ 132-137): Նկատի ունենալով, որ տևական ժամանակ արձանագրվել է տնային տնտեսությունների հատվածի խնայողությունների բացասական մակարդակ, ինչպես նաև ելնելով վերջիններիս նշանակալի ազդեցությունից համախառն ազգային խնայողությունների մակարդակի վրա, հեղինակի մոտեցումը, այն է՝ բարձրացնել խնայողական գործընթացներում ներառականության աստիճանը և համահարթ եկամտային հարկից անցում կատարել ըստ վճարունակության հարկման, կարող է համարվել փաստարկված (էջ 146-166):

Խնայողական գործընթացներում տնային տնտեսությունների ներառականության աստիճանի բարձրացմանն առնչվող, հեղինակի մշակած մոտեցումը, բացի հետապնդվող բուն

նպատակից, պարունակում է մի կարևոր կողմ: Այսպես, հեղինակը նկատում է. «Խնայողական գործընթացներում ներառականության ապահովման նկարագրված մեթոդական մոտեցումը, ըստ էության, վերաբերում է նրան, թե պետությունն ինչ կարող է անել, ընդհանուր առմամբ, տնտեսական աճի ներառականությունն ապահովելու համար: Մինչդեռ, դա ենթադրում է նաև, թե ինչ կարող են անել տնային տնտեսությունները՝ այդպիսի քաղաքականության արդյունավետությունն ապահովելու համար: Մարդկանց խնայողական վարքագծի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, սակայն էական է ֆինանսական գրագիտության ազդեցությունը» (էջ 160):

Ատենախոսության հեղինակի եզրակացությունները և առաջարկությունները փաստարկված են և համակողմանի հիմնավորված, հիմնված են հետազոտության ընթացքում ստացված արդյունքների համայիր հետազոտության և վերլուծության վրա և ուղղված են ներքին խնայողություններով ՀՀ-ում կայուն տևական աճի ապահովման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման ապահովվածության աստիճանի բարձրացմանը:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին: Հրապարակված 13 գիտական հոդվածներում հիմնականում շարադրված է ատենախոսական աշխատանքի բովանդակությունը:

ԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ

Ատենախոսական աշխատանքը Հայաստանում խնայողությունների, որպես երկրի ներդրումային ներուժի, համապարփակ ուսումնասիրության առաջին փորձն է: Ստացված արդյունքները ընդհանուր գիտական նորույթը համախառն ազգային խնայողությունների, հատկապես դրա կարևոր բաղադրիչի՝ տնային տնտեսությունների հատվածի խնայողությունների մակարդակի բարձրացման խթաններին առնչվող մեթոդական մոտեցումների և խնայողությունների արդյունավետ օգտագործման հայեցակարգի մշակումն է, որի իրականացումը ենթադրում է ներքին խնայողությունների կենտրոնացում և ուղղորդում սահմանային տեխնոլոգիաների ներդրմանը, այդպիսով՝ երկրի տնտեսական բարդության աստիճանի բարձրացմանը և տևական կայուն տնտեսական աճի ապահովումը:

Հետազոտության արժանահավատությունն ապացուցվում է, հետազոտության տարբեր մեթոդներով, տեղեկատվության նշանակալի զանգվածի խոր վերլուծությամբ. Վերլուծություն և սինթեզ, կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն, Գրեյնջերի, ADF, OLS թեստեր:

Հետազոտությամբ ստացված արդյունքները հեղինակին հնարավորություն են ընձեռել ձևակերպելու նորույթի հիմնական դրույթները, որոնք հանգում են հետևյալին.

1) գնահատվել է համախառն ազգային խնայողությունների և ներքին ներդրումների միջև ռեսուրսային ճեղքվածքի վրա օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցության կամ՝ ներքին աղբյուրների հաշվին ներքին ներդրումների ապահովվածության աստիճանը.
2) խնայողությունների և տնտեսական աճի դինամիկայի միջև փոխկապվածության ուղղության ուսումնասիրությամբ, բացահայտվել է, որ ՀՀ-ում համախառն ներքին խնայողությունները տնտեսական աճի պատճառ են.
3) մշակվել է զուտ ազգային խնայողությունների ճշգրտման մեթոդական մոտեցում, որը հաշվի է առնում բնական ակտիվների սպառումը և ներդրումները մարդկային կապիտալում.
4) մշակվել է ներքին և օտարերկրյա ներդրումների (արտահանման հարթակի օտարերկրյա ուղղակի և ներքին ներդրումների) զուգորդմամբ՝ սահմանային տեխնոլոգիաների ներդրման նախագծերի ֆինանսավորման հայեցակարգ, որը ենթադրում է պետական սուբսիդավորում՝ ներքին խնայողությունները համախմբելու և դիսկոնտավորված (ծովային ելքի բացակայության գործոնով) արդյունավետ հարկային դրույքաչափերի կիրառում՝ օտարերկրյա ներդրողներին խրախուսելու համար.
5) մշակվել են հարկաբյուջետային գործիքներով խնայողությունների խթանման մեթոդական դրույթներ, որոնք ենթադրում են՝ ա) անցում ըստ վճարունակության հարկման համակարգին, բ) նորածին երեխաների համար անհատական խնայողական-ներդրումային հաշիվների ստեղծում՝ դրանցում կատարելով կուտակումներ բնօգտագործումից ստացվող պետական եկամուտներից մասհանումների հաշվին:

Հեղինակի հետազոտությամբ ստացված նորույթը հիմնված է գիտական հայեցակարգերի վրա և ապացուցվում է խնայողությունների բնագավառում արտասահմանյան և հայրենական գիտնականների աշխատանքների, հեղինակավոր միջազգային կազմակերպությունների մշակումների մանրազնին հետազոտությամբ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ատենախոսության հիմնական դրույթները, հարկ է ուշադրություն դարձնել վիճելի որոշ պահերի վրա.

1. Ֆինանսական զարգացման հարցին անդրադառնալիս հեղինակը ՀՀ կապիտալի շուկայի զարգացման ոչ լավատեսական կանխատեսումներից ելնելով, այն չի դիտարկել որպես խնայողությունները ներդրումների փոխակերպման մեխանիզմ (էջ 114), մինչդեռ ներքին խնայողությունները ներդրումների փոխակերպումը բազմաթիվ երկրներում հիմնականում կատարվում է, մասնավորապես, կորպորատիվ արժեթղթերի միջոցով: Այս առումով լրացուցիչ պարզաբանման կարիք է զգացվում:

2. Նկատի ունենալով ծովային ելք չունենալու գործոնը և հիմք ընդունելով միջազգային պրակտիկայում կիրառվող մեթոդաբանությունը, արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի համար հեղինակն առաջարկել է կիրառել դիսկոնտավորված «արդյունավետ հարկային դրույքաչափեր» (էջ 126): Թվում է, որ դիսկոնտավորված դրույքաչափի կիրառումը կարող է խնդիր առաջացնել Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների առումով:
3. Խնայողությունների խթանման դրամավարկային քաղաքականության գործիքներին անդրադառնալիս, հեղինակը եզրակացնում է, որ կապիտալ ներդրումներ կատարելիս՝ մասնավոր հատվածի համար առևտրային բանկերի տրամադրած վարկերը գրավիչ չեն, ինչը, ենթադրաբար, ոչ միայն տոկոսադրույքի հետ է կապված, այլև վարկավորման այլ պայմանների (էջ 144): Մինչդեռ խնայողություններ-ներդրումներ ռեսուրսային ճեղքվածքին անդրադառնալիս, նշվում է, որ «առաջացած ռեսուրսային ճեղքվածքը ծածկվել է ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի և առևտրային բանկերի տրամադրած վարկերի հաշվին» (էջ 57):
4. Ներքին խնայողությունների վիճակի, խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխազդեցության գնահատման ժամանակ ներկայացվում է վիճակագրական տվյալների նշանակալի զանգված: Այս առումով՝ կարիք կա պարզաբանելու հետազոտության տարբեր ժամանակահատվածների ընտրությունը (օրինակ, էջ՝ 50-51՝ 1960-2020 թթ., էջ 66՝ 1991-2020 թթ., էջ 55, 57՝ 1993-2020 թթ., էջ 60՝ 2000-2019 թթ., էջ 45՝ 1995-2020 թթ., էջ 68՝ 1995-2019 թթ., էջ 62՝ 1995-2021 թթ., էջ 42-43՝ 2002-2021 թթ.):

Այդուհանդերձ, արված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի արժեքավորությունը:

Ատենախոսության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին 6-րդ, 7-րդ կետերին:

Ընդհանուր առմամբ, ատենախոսական հետազոտությունն ավարտուն գիտամեթոդական աշխատանք է, որը կատարվել է ինքնուրույն և մասնագիտական բարձր մակարդակով:

Ըստ թեմայի արդիականության, արդյունքների հիմնավորվածության և արժանահավատության, գիտական նորույթի և կիրառական նշանակության, Դ.Գ.Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական

հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Դ. Վ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Դ. Վ. Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ
«ՖԻԶ ՀԱՈՒՍ» ՍՊԸ՝ Հայկ Ղազարյան

18.05.2022 թ.

ԵՐԵՎԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
YEREVAN LIMITED LIABILITY COMPANY
«ՖԻԶ ՀԱՈՒՍ»
«FIZ HOUSE»
01277204
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * RA